

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՄՍՍՄԲՈՒԼԻ «ԱՐԱՍ» (ARAS YAYINCILIK) ԵՐԿԼԵԶՎՅԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ 2000-2006ԹԹ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Գրացուցակի փոխարեն)

«ԱՐԱՍ»-ը գտնվում է Ստամբուլի մախկին հայաշատ Պերուս հարուստ քաղամասում, որն այսօր քաղաքի եվրոպական ճարտարապետության լավագույն օրինակ հանդիսացող և տուրիստական ամենասիրված վայրերից է: Հայկական, մահ հունական համայնքի մախկին, այսօրյա խոտներամ թուրքական փողոցում, երբեմնի (100-ից քիչ տարիներ առաջ) հայկական շքեղագույն հարկաբաժինների, խանութների, տպարանների, հյուրանոցների, եկեղեցիների, վաճառատների, նկարչատների, բժշկական դպրամաստների, Թոքատլյան հայտնի պանդոկի, ճաշարանների, ծաղարանների փոխարեն «Արաս»-ը 1993 թվականից հրատարակչական իր կարևոր գործունեությունն է ծափելը, մասամբ պահելով այս փայրի հայկական շուկա՝ Սուրբ Երոթորություն եկեղեցու, «Մարմարա»-ի, «Ժամանակ»-ի խմբագրատների, «Թուրքուազ» գրականագրության, «Գարի լուսանկարիչը» ճանաչված Արա Գյուլերի կենտրոնի ու արձագանքի հետ միասին:

«Արաս»-ը հիմնադրվել է 1993 թվականին: Այդ ժամանակահատվածից ի վեր քաղցմանել, խմբագրել ու հրատարակել են 70-ից ավել գրքեր հայերեն, թուրքերեն: Եվ այս ամենը ոչ թե պատահական, այլ մտածված ու կշռադասված նպատակահայեցությամբ, հրաշալի որակով, մեայուն արժեքով ու մակ՝ հզու թեպրությունով: Հրատարակչության նպատակն է եղել կամուրջ հաստատել տարածաշրջանի տարբեր մշակույթների միջև, ներկայացնել ու փոխանցել մեր մշակութային արժեքները ներկա ու ապագա սերունդներին, շարունակել ճեռն Օսմանյան կայսրությունում խոր արմատներ ունեցած արևմտահայ հրատարակչական մշակույթի ավանդույթները, դառնալով նոր հազարամյակում այդ հարատուագույն ժառանգության ներկայացուցիչը հանրապետական Ստամբուլում:

«Արաս»-ի մեծագույն արժանիքներից է ներգրականության հրաշալի էջերի՝ հրատարակությամբ թուրքերենով: Բնականաբար դրանց գերակշռող մասը հայերենից կատարված քաղցմանություններ են:

Դրանք ուղղված են ոչ միայն թուրքերենով օտար ընթերցող շրջանակներին, այլև հայ ընթերցողներին, որոնց մի մասի համար թուրքերենով կարդալն ավելի սովորական է այսօր: Այս տպագրությունները նպատակ են հետապնդում ծանոթացնել արևմտահայ գրականության հայտնի անուններին ոչ թե մեկ գրքով, այլ նրանց գործերի ժողովածուներով, դրանով իսկ հնարավորություն ընձեռնելով ընթերցողներին հիմնալ ու վայելել այդ հեղինակների գործերի բազմակողմանի էությունն ու տաղանդը: Այդպիսի հեղինակներից են արևմտահայ իրականության վերջին գյուղագիրներից Հակոբ Մնձուրին (Տեմիրճյան, 1886-1978)¹ և Սկրտիչ Մարկոսյանը (ծն. 1938թ):

Ծնունդով արմտանցի Հ. Մնձուրու «Գիւղը կապրի իմ մէջս» պատմվածքների ժողովածուն (կից բառարանով ու ծանոթագրություններով, 192 էջ), տպագրվել է հայերեն: Մնձուրու, «Կարոտի գրականության այս առաքյալի» մյուս երկու ժողովածուները հայերենից կատարված բարգմանություններ են² և շարունակությունն են կազմում նրա նախորդ՝ «Արմտան, Եփրատի մյուս ափը» գրքի: Այս երկու գրքերում էլ գերիշխում է երգնկացու երազները իր երկրի, նրա բնության մասին, այնտեղ ապրող տարբեր ազգերի՝ թուրքերի, քրդերի, հույների, լազերի, հայերի կյանքի, սովորությունների, պատմությունների վերհուշը:

Երկրորդ հայտնի անունը, տիգրանակերտցի Սկրտիչ Մարկոսյանը (1938), մեր ժամանակների արևմտահայ գրականության ամենահայտնի դեմքերից է, արժանավոր ժառանգորդը Հակոբ Մնձուրու արվեստի: Հիմնականում թուրքագիր այս գյուղագրի պատմվածքների ժողովածուները լույս են ընծայվել թուրքերենով³, իսկ «Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն» պատմվածքների ժողովածուները՝ հայերեն: Այս գրքերի «հերոսը» 1950-ականների Տիգրանակերտն է իր բոլոր երանգներով, հրատարակիչների կարծիքով նաև մի տեսակ «օդորմի»՝ հայաթսփ Տիգրանակերտի հայության, սրտածնիկ հիշատակարան ու կարտասկեզ ակնարկ իրենց բազմաչառչառ անցյալին:

«Արաս»-ը հայերենից թարգմանաբար հրատարակել է մի այլ հայտնի պոլսեցու, 1913 թվականից ամերիկաբնակ գրողի՝ Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966)⁴ «Աղունիկներս Խաբբերդում մնացին» ժողովածուն:

Հաջորդ թուրքերեն 2 հրատարակությունների հեղինակը Գրիգոր Ջեյհանն է (1926-1999)⁵: Ջառայում ծնված գրողը հարազատ երկրի և ընդհանրապես Անատոլիայի բանահյուսական ժառանգության և մարդկանցից իր լսած պատմություններն է ներկայացնում: Դրանք են՝ «Ջոռահավաքի երգերով ենք մեծացել» («Seferberlik Türküleriyle Büyüdüm») և «Ճակատագիրը ձին պայտեց, ընկավ մեր ետևից» («Atmı Nalladı Felek Düştü Peşimizde”):

Համաշխարհային լուսանկարչության հայտնի անուններից Արա Գյուլերի (1928) «Բաբեդեն վերջ պիտի ապրինք» ("Babil'den Sonra Yaşayacağız")⁶ պատմվածքների ժողովածուն լույս է ընծայվել և հայերեն քնագրով և թուրքերեն թարգմանությամբ:

Թուրքերեն հրատարակությունները, որոնք անհամեմատ մեծ թիվ են կազմում, միտված են թուրք և քրքախոս շրջանակներին ներկայացնելու արևմտահայ, նաև սփյուռքահայ գրական հայտնի դեմքերին ու երկերին: Դրանք նաև ժամանակակից ստամբուլահայ հեղինակների հայերեն գործերի թուրքերեններն են, երբեմն կատարված նույն հեղինակի կողմից: Այդպիսին է Երվանդ Կոսեյանի (1923) «Իր երկիրը կարոտող խեղճերինը» ("Memleketini Özleyen Yengeç"): Անդան Օզերի (1927-1984) «Ապրելու սպասումով» ("Yaşamı Beklerkeni")-ը հեղինակի «Եվ» գրքի թարգմանությունն է⁷:

Ստամբուլահայ ժամանակակից գրական դեմքերի հրատարակություններից են Բաֆֆի Քեքապյանի (1945) «Նոսիր Հալի բեյ. խոսիր» ("Konuş Halil Bey Konuş") և երիտասարդ հեղինակ Ժակլին Չելիքի (1968) երկու գրքերը՝ «Գումգափըն ավազի ժամացույցում» ("Kum Saatinde Kumkapı") ու «Օձի ճանապարհը» ("Yılanın Yolu"):

Մինչ եղեռնյան հեղինակներից թարգմանաբար հրատարակվել են Երվանդ Սրմաքեշխանյանի (1870-1915) «Չկնոսի սերը» ("Balıkcı Sevdası")⁸, Գրիգոր Չոհրապի (1861-1915) «Նովելները» ("Öyküler")⁹:

«Արաս»-ի թուրքերեն հրատարակությունների մի պատկանելի մասը Սփյուռքի մեր հոշակավոր, հայագիր ու այլալեզու հայտնի գրողների գործերի ներկայացումներն են: Դրանցից ամենահարուստը Վիլյամ Սարոյանի (1908-1981)¹⁰ գործերն են: 5 գիրք՝ 2001-2004 թթ թվականների ընթացքում: Այն է՝ «Վախկոտները համարձակ են» ("Ödlekler Cesurdu"), «70000 ասորի» ("Yetmiş Bin Süryani"), ("Paris-Fresno Güncesi 1967-68"), «Իմ սիրտը լեռներում է», «Ապրելու ժամանակը» ("Yâreyim Dağlardadır, Yaşamak Vakti") , «Մարդկային կատակերգություն» ("İnsanlık Komedisi"):

Հայերենից թուրքերեն թարգմանաբար լույս է տեսել նաև սփյուռքահայ ամենահայտնի ու հմայիչ հեղինակներից Վահրամ Մավյանի (1926-1983) «Ամենուր հայ կա» ("Her Yerde Ermeni Var") գիրքը¹¹:

Թուրքերենով հրատարակված վեպերի թվում են Վահան Թոթովենցի (1889-1937) «Կորցրած տան ժառանգները» ("Yitik Evin Vâisleri")¹², Ջավեն Պիպերյանի (1921-1984) 2 գործերը՝ «Հայրս Սշքալե չգնաց» ("Babam Aşkale'ye Gitmedi") և «Միայնակները» ("Yalnızlar")¹³, Պետեր Նաջարյանի (1940) «Վերջին հայը» ("Son Ermeni"), որ անգլերենից է թարգմանվել: Դիարքեքիրցի հոր ու աղանացի մոր ամերիկաբնակ որդին եղեռնի, զաղթի պատճառով իր կորցրած ծնողների ու երկրի հետքերն է ուզում գտնել: Գրքի հերոսը՝ Արամը անցածի մասին բազմաթիվ

հարցեր ունի, որ ամբարվել են իր մեջ ու վտրձում է կիսել ընթերցողի հետ: Այս հոգեբանությամբ, ծնողների, հայրենիքի նկատմամբ տանջող պարտքի զգացումով դժվար ապրելու ևս մի ապացույց է՝ ֆրանսահայ հայտնի յրագրող, գրող, Պատվո լեգեոնի ասպետ Ժան Քեհայանցի(1944)¹⁴ «Ամհայրենիք»-ը (“Vatansız”), որը շատ շատերի մասն եղեռնից մազապուրծ Մարսել գաղթած իր ծնողների կյանքն է: Նրանց մահվանից հետո միայն Ժան Քեհայանը բարոյական պարտք համարեց գրել, հրատարակել բոլորիս մղջավանջային պատմության իր մասնիկը: Հեղինակի ցանկությունն է ֆրանսերենով ու թուրքերենով հրատարակված այս վեպը առաջիկայում նաև հայերենով լույս ընծայել:

Սեզ համար շատ կարևոր են հայերեն ու թուրքերեն լեզուներով նաև գիտական աշխատությունների հրատարակությունները՝ լինի հայագիտական, լինի թուրքագիտական: Սա չափազանց պատասխանատու ու ծանր գործ է: Այն ակնկալում է ծայրաստիճան լուրջ մոտեցում, մասնագետների ընտրություն, անհրաժեշտության դեպքում նաև՝ հայ ու թուրք գիտնականների համագործակցություն: Այս առումով չափազանց օրինակելի ու բացառիկ հրատարակություն է պոլսահայ հայտնի մատենագետ, թուրքագետ Գևորգ Փամբուկյանի (1923-1996) գործերի հետմահու քառահատորյակը (“İstanbul Yazıları”; “Ermeni Harflı Türkçe Metinler”; “Zamanlar, Mekyanlar, İnsanlar”; “Biyografileriyle Ermeniler”)¹⁵: Այն հիմնականում ամփոփում է թուրքական պատմագիտական գրականության մեջ Գևորգ Փամբուկյանի թուրքերեն լեզվով հանրագիտարանային, տարբեր հեղինակավոր ամսագրերում հրատարակած աշխատությունները, հոդվածները: Հատորներից մեկը նվիրված է հայատառ թուրքերեն գրականությանը: Հրատարակիչները, խմբագիրները մեծ աշխատանք են կատարել, անգամ ուսումնասիրել նրա անտիպ արխիվները ու լույս ընծայել դրանց մի մասը: Հրատարակությունն իրականացնողների թվում երախտագիտության է արժանի հրատարակիչ, թուրք գիտնական Օսման Բյուքերը: Իհակե, դեռ անելիք շատ կա: Այնուամենայնիվ այսպիսի լուրջ գիտական ժառանգության հրատարակությունը ոչ միայն ապացույց է Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության խնդրում թուրքական գիտական շրջանակների մոտ հայկական մատենագիտության անվախարհիկ նպաստի գնահատությունը, այլև՝ թույլ է տալիս հուսալ նոր, հաջող գիտական ձեռնարկներ: Այս առումով չափազանց օգտակար կլինեն(և հայկական, և թուրքական շահագրգիռ գիտական շրջանակների համար) հայերեն ու հայատառ թուրքերեն ձեռագրերում ամբարված քանկարժեք նյութերի հրատարակությունը: Դրանք Օսմանյան քաղապորների, վեզիրների, առանձին կարևորագույն դեպքերի ու դեմքերին նվիրված պատմություններ են: Սի բան, որը չես կարող փոխարինել այլալեզու նյութով: Հանգամանք, առանց որի երբեք հնարավոր չի լինի գոնե մասամբ լիարժեք Օսմանյան պատ-

մություն ներկայացնել: Գ.Փամբուկչյանի գործերի հրատարակությունը ու նրա նկատմամբ եղած թուրքական շրջանակների մեծ հետաքրքրությունը թույլ է տալիս մտածել, որ այնուամենայնիվ թուրք գիտնականների մի խավ կարողանում է սթափ վերաբերվել իրենց երկրի պատմական խնդիրների լուրջ, անկողմնակալ ուսումնասիրությանն ու լուսաբանմանը: Սա վերաբերվում է ոչ միայն պատմության, այլև գրականության խնդիրներին: Մենք նկատի ունենք հայատառ թուրքերենով ծով աշուղական գրականությունը: Խոսքը վերաբերում է հեղինակների հարստությանը, նյութին, արևելյան երաժշտական ժանրային ձևերի բազմազանությանը, դրանց հայկական ու եվրոպական նոտագրությանը: Նույնը կարելի ասել հայկական դիվաններում պահպանված հայերեն, օսմաներեն, հայատառ թուրքերեն բազմաթիվ վավերագրերին, որոնք հետաքրքրության անչափ մեծ շրջանակ են ներկայացնում: Հարստություն, որը չունի համարժեքը այսօրյա թուրքական իրականության մեջ: Կարծում ենք մեր գիտական որոշ հրատարակությունների թուրքերեն հրատարակությունները ևս կարևոր են Թուրքիայի գիտական, մտավորական ընթերցող շրջանակների համար:

Թուրքերենով հրատարակությունների թվում են Երվանդ Օտյանի (1869-1926) հանրահայտ «Ընկեր Փամգունի» (“Yoldaş Pamçuni”) երգի-ծավալը¹⁵, Արամ Փեղիվանյանի (1917-1979) բանաստեղծությունների «Ազատությունը երկու քայլ այն կողմ չէ» (“Özgürlük İki Adım Ötede Degil”) ժողովածուն, Հակոբ Արսլանյանի (1934) «Ամուռն Հակոբ, երկիրս’ Թոքաթը» (“Adım Agop Memleketim Tokat”) երկը, 1889թ.Նյու-Յորքում անգլերենով տպագրված հայ բողոքական հեղինակ Գրիգոր Պասմաճյանի (1853-?) «Հասարակական և կրոնական կյանքն Արևելքում»¹⁶ (“Şark’ta Toplumsal ve Dinsel Hayat”) աշխատությունը, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պրոֆեսոր, հայր Լևոն Զեքիյանի(1943) «Հայերն ու մոդերնիզմը» (“Ermeniler ve Modernite”) ¹⁷, Արամ Ամտոնյանի (1879-1951) «Բալկանյան պատերազմը» (“Balkan Savaşı”) մեծածավալ գործը¹⁸, Ռեմե Կրուսսեի (1895-1952) «Հայերի պատմությունը» (սկզբից մինչև 1071թ. 752 էջ. “Ermenilerin Tarihi”) պատմագիտական գործը, Օշին Չիլիհգիբի (1945) խոհա-փիլիսոփայական «Մեր միջի բանալը» (“İçimizdeki Kara Delik”) երկը, Օսմանյան կայսրությունում 1863թ «Մահմանադրութիւն Հայոց 1839-1863թթ» (“Osmanlı Devletinde Ermeni Anayasası’nın Doğuşu 1839-1863”) ամերիկահայ պատմաբան Վարդան Արթինյանի (1932-2002) ծավալուն աշխատությունը: Եվրոպայի ամենսիրված քրիստոնյա սրբերից մեկի՝ Սուրբ Վլասի հայկական (Մըվազում ապրած) ծագման (280-316թթ) մասին է Արման Չուխաճյանի (1930) հետազոտությունների ամփոփումը հանդիսացող (“Ulusal arası Üne Sahip Sivaslı Aziz Vlas”) կարևոր ու շատ հետաքրքիր գրքույկը²⁰: Արսեն Ավագյան(1968) «Հայերը և Միություն ու Առաջադիմությունը»²¹

քաղաքագիտական հետազոտությունը հայկական քաղաքական չորս կուսակցությունների և երիտթուրքերի վերոհիշյալ կազմակերպության մասին է ("Ermeniler ve Ittihat ve Terakki"):

Ճանաչողական տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում Գեղամ Զերովբյանի(1924-1980) «Հայերի դիցաբանական պատմությունը» (Mitolojik Ermeni Tarihi) հետազոտական աշխատանքը: Այն Անատոլիայում հայ ժողովրդի ու հայերենի ծագումնաբանության շուրջ վերջին հարյուրամյակում կատարված գիտական հետազոտությունների միջև ակադեմիական կապ անցակացնելու փորձ է: Գեղամ Զերովբյանը հեղինակ է նաև բառգրքի, որին կանդրադառնանք ստորև:

«ԱՐԱՍ»-ը ներկայացնում է նաև ստամբուլահայ նոր սերնդի ծաղրանկարիչներ Օհանի (Հովհաննես Շաշկալ, 1959) «Սև արկղ» ("Karakutu") և Աբեթ Գըջըրի(1978) 2 ժողովածուները՝ «Փոքրամասնությունյան» ("Azınlıktan"), «Ես թոփիկ չեմ» ("Ben Topik Degilim"): Այս գործերի մեծ մասը տպագրվել են Սաամբուլի թուրքական հայտնի պարբերականներում, հայկական մամուլում:

19-րդ դարի հայտնի երաժիշտ Գառնիկ Կարմիրյանի(1872-1947) «Կյանքը և գործերը» ժողովածուն ("Karnik Garmiryan Hayati ve Eserleri", 360 էջ), Շառլ Ազնավուրի(1924) վերջին գիրքը (Charles Aznavour, "Geçmiş Zaman Olur Ki"), ինչպես նաև հրատարակչության աշխատակցուհի Թագուհի Թովմասյանի (1952) խոհարարական՝ մեծ մայրիկների խոհանոցից «Ձեր սեղանը շեն լինի» գիրքը ("Sofraniz Şen Olsun") մեծ ընդունելություն են գտել:

Մոտավորապես սրանք էին թուրքերենով լույս տեսած գրքերը, որոնց արժեքն ու նշանակությունը դժվար է գերազնահատել:

Գալով հայերեն հրատարակություններին, ապա կարևոր են 10 000 բառ պարունակող Գեղամ Զերովբյան Իշկուլի (1924-1980) «Հայերեն բառգիրք»-ը (2003թ.): Բառարանի առաջին հրատարակությունը եղել է 1962թ.: Այս հրատարակությունը խմբագրվել ու ծանոթագրվել է հեղինակի աշակերտներից մեկի՝ Արտաշես Մարկոսյանի կողմից, որը բառգիրքը վերամշակել է, լրացրել է հարյուրավոր թուրքերեն նոր համարժեքներով: 10 000 բառացանկի 6 հազարի հայերեն բառերի դիմաց տրվել են դրանց մոտ 10 000 թուրքերեն նշանակությունները: Անկարելի է չնշել Բառգրքի օգտակարությունը, նրա արժեքը հայերենն ուսումնասիրողների ու թարգմանչական գործով զբաղվողների համար:

Ստամբուլահայ գրական հայտնի անուններից խմբագիր, հրատարակիչ Ռուբեն Մաշոյանի(1928-1999) «Եվ այսպես ապրեցանք» գիրքը(1998թ.), բաղկացած է 1950-ական թվականներից ի վեր գրված պատմվածքներից և իր ժամանակակից 7 հայտնի մշակութային դեմքերի մասին հուշագրություններից:

Երվանդ Կոպեյանի «Կեանքի լուսանցքեն»-ը հեղինակի պատմվածքների հերթական ժողովածուն է(2003թ.), այսօրվա Սաամբուլի պարզ մաղկանցով, Թաքսիմի հրապարակով, Էփթալֆոս սրճարանով...

Պատմվածք-հուշագրություն է բազմավաստակ գրող, ուսուցիչ Վահերամ Պուրմայանի (1893-1978) «Հեզ թուղթի կտորներ» մեմագրություն հաստրյակը (2005թ): Այն ընթերցողին մասնակից է դարձնում հեղինակի ուխտագնացությանը ծննդավայր, երբեմնի հայաշատ Նիկոմիդիա, Ատաբազար, Արմաշ ու այլ կենտրոններ, ուր հանդիպում եք ծանոթ ու անծանոթ շատ նվիրական անունների: Գրքին կից է ընդարձակ բառարան ու շահեկան ծանոթագրություններ:

Հալեպահայ հայտնի գրող Թորոս Թորանյանը (1928) հեղինակ է ավելի քան 50 գրքերի: «Խսթանպուլահայերը կը կանչեն» (1997թ.) գրքի առաջին մասը հեղինակի 1996թ. Պոլիս այցելության ընթացքում տրված բանախոսություններն ու հուշերն են, իսկ, երկրորդ մասը պոլսահայ գրողներին ու գրական կյանքի անցուղարձին նվիրված Թորանյանի 1995թ. գրված աշխատությունն է:

Կ.Պոլսի հասարակական, առևտրական, մշակութային կյանքում հայ ամիրաների խաղացած դերն անժխտելի է: Արևմտահայությունը շատ պարտական է սուլթանական պալատում ծառայած հայ երևելիներին, որոնց համար բարեգործություններով միայնց հետ մրցելու իմաստը կայանում էր նրանում, թե ո՞վ ավելի օգտակար կլիներ իր ազգին: Եվ դա ոչ միայն շնորհիվ իրենց հարստությանը, հայրենասիրությանը, այլ նաև սուլթանական պալատում նրանց ունեցած բարի համբավին ու կապերին: Նրանց են պարտական արևմտահայ իրականության մեջ մինչև օրս գործող կրթական, մշակութային, առողջապահական, բարեսիրական շատ ու շատ օջախներ, պատմական հուշարձաններ ու բազմիցս վերանորոգված վանքեր, եկեղեցիներ: Նրանք են կանգնած եղել արևմտահայ իրականությունում լուսավորական շարժման, «Չարթունքի շրջանի», հայ տպագրական գործի, պարբերական մամուլի, գրահրատարակչական գործի, արվեստների, մասնավորապես թատրոնի, երաժշտության, ճարտարապետության, գիտության, արհեստների, գյուղատնտեսության, արդյունաբերության, վաճառականության և այլնի զարգացման ճանապարհին որպես լուսարարներ, հովանավորներ: Նրանք մեծագույն ծառայություններ են մատուցել Բ.Դեանը, նրա արտաքին քաղաքականությանը, որպես դիվանագետներ, թարգմաններ և պալատական պաշտոնյաներ: Նրանց շնորհիվ շատ ու շատ պոլսահայ ու գավառաբնակ երիտասարդներ եվրոպայում կրթություն են ստացել, վերադարձել՝ իրենց պարտքը կատարելու հայրենիքում: Այդ երիտասարդներից շատերի գործունեությամբ է պայմանավորված եղել շատ ու շատ ճյուղերի զարգացումը Օսմանյան կայսրությունում: Նրանցից շատերը բարձրագույն պարզևների, պաշտոնների ու գիտական աստիճան-

ների են արժանացել մաս Թուրքիայից դուրս, տարրեր երկրներում, տարրեր պետությունների ու թագավորների կողմից իրենց երկրին մատուցած ծառայությունների համար: Լրագրող Արա Ալինյանի (1908-1976) «Յարթանակի ճամբան» վեպը (2005թ.) նվիրված է Պեզգյան ամիրայի կյանքին, Օսմանյան կայսրության իր ժամանակի պետական ու ազգային նշանավոր դեմքի, մասնավորապես Սուլթան Մահմուդ Բ-ի հետ ունեցած ամիրայի մտերմության շրջանին: Սա գալիս է լրացնելու ամիրայական գերդաստանների մասին Մխիթարյանների հրատարակած հրաշալի նյութերը, առանձին գործերին, Վահան Ջադարյանի «Յիշատակարան»-ում տեղ գտած հայ երևելիների կենսագրություններին, ամիրաներին նվիրված վերջին տարիներին Փարիզում լույս տեսած ֆրանսերեն հրատարակությանը:

Վիլյամ Սարգսյանի երկրպագուների համար ուղակի նվեր էր Պետրոս Ջուլյանի (1922-2005) «Դեպի Պիթիս» ստավարածավալ գիրքը (2003թ., 416 էջ, 135 նկարներ), ուր 1964թ. ծննդավայր ուխտագնացության ճանապարհված Սարգսյանին ուղեկցող հեղինակը վերադարձադրել էր ամենը նախ «Մարմարա»-ի մեջ, ապա՝ առանձին գրքով: Իրականություն էր դարձել հանճարեղ գրողի երկար տարիների մեծագույն ու նվիրական, խխրագույն երազը՝ ճամփորդություն դեպի հայրական տուն...

Շավարշ քին. Պալըմյանի (1915-1993) «Ու ես կերթամ»-ը (2005թ.) «Մարմարա» օրաթերթում 1964-70-ականներին լույս տեսած 57 հոդվածների վերամշակյալ գիրքն է՝ դեպի Արևմտյան Հայաստանի գավառները, հատկապես Անատոլիի արևելյան ու հարավային մահանգներ քահանայական պաշտոնով կատարած իր ճամփորդությունների ամփոփումը: Այս ճամփորդական հուշերը կարևոր են նրանով, որ ամայացած, թուրքացած ու քրդացած մեր բնակավայրերի շարքում ներկայացնում է դեռևս 40 տարիներ առաջ մասունքների մման մնացած, սակայն այսօր շատ ավելի նորացած ու էլի ամայացած հայկական Անատոլիայի հարազատ տեղերը: Այս գիրքը ևս յուրօրինակ տուրք է ծնողների ու ծննդավայրի նկատմամբ հիշողությունների: Հավելվածի «Յիշողություններ հատուածներ հօրս կենքի ռդիսականներ»-ում հեղինակի որդին, բժիշկ Պարզև Պալըմյանը հոր մասին կենսագրական է ներկայացրել, որը կարծես ծաղկեփունջ է քահանայի գերեզմանի «քարձրացած» հորդաբքին: Հավելվածի երկրորդ՝ «Ու անոնք ալ գացին» բաժինը գրքի հետքների հետագա ճակատագրի մասին է: Հուշեր, նկարներ, հուշեր... Եղեռնի զոհերի երկրորդ, երրորդ ու մաս հետագա սերունդների հոգու պարտքի արտահայտության անթաքույց ապացույցներ:

Ստամբուլի «Զուլիս» մշակութային, թատերական ամսագրի երկարամյա գլխավոր խմբագիր Հակոբ Այվազը (1911-2006) յուրաքանչյուր համարի վերջում ուներ երգիծական փնտրվող մի էջ՝ «Լուցիքա առու-

տու»: Դրանց թիվը հասավ 280-ի: Համաձայն գրքույկում(2003թ.) տեղ են գտել դրանցից 48-ը: Ափսոս, որ ստամբուլահայ արվեստի համրագիտարանային արժեքի այս ամսագիրը հեղինակի զառամյալ լինելու պատճառով անդարձ փակվեց:

Ստամբուլի մասին պատմության ամենահայտնի հեղինակը եղել է Հակոբ Սիրունին (Շուրյան, 1890-1973): «Գարեգին պատրիարք Խաչատուրեան» մենագրությունը (2003թ.) մախապես լույս է տեսել Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում: Ուշագրավ այս մենագրությունը «ԱՐԱՍ»-ի հրատարակիչ սաների կողմից երախտագիտության ու հավատարմության տուրք է արմաշական իրենց հիմնադրին՝ Գարեգին պատրիարք Խաչատուրյանի հիշատակին, նրա ձեռակերտը համդիսացող Դպրեանքի 50-ամյակին: Աշխատությունը հագեցած է կարևոր ծանոթագրություններով, Գարեգին պատրիարքի կյանքի ու գրական վաստակի մասին նոր տեղեկություններով: Հակոբ Սիրունու մահվան 30-ամյակին ու «Նարեկ»-ի հազարամյակին զուգադիպող այս մենագրության մեջ ամփոփվում է նաև «Նարեկ»-ի սիրունիական սքանչելի մի վերլուծությունը:

Վաղուց ժամանակն է Կ.Պոլսո պատրիարքների լիարժեք ցուցակների, նրանց մասին աշխատությունների կազմակերպումը, հրատարակությունը: Այն կարևոր մի մասն է ոչ միայն հայ եկեղեցու, այլև՝ արևմտահայության պատմության, շատ ու շատ հարցերի պատասխանները, բացատրություններն ակնկալող երևույթ՝ իր ժամանակային ու մարդկային բարդ առանձնահատկություններով հանդերձ:

Հուշագրության ժանրին է պատկանում «Օրագրութիւն սարկաւագի» գիրքը՝ Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ Արք.Մանուկյանի(1919) սարկավագության ու աբեղայության շրջանի մաս պատմական արժեք ներկայացնող անցուդարձերով հարուստ շրջանի պատմությունները, գրի առնված 20-ամյա շրջանում: Պատմական, ուսուցողական, իմաստասիրական ցուքերով, իրենից հետաքրքիր աղբյուր են ներկայացնում այդ ժամանակի շատ իրադարձություններ:

«Արաս»-ը հրատարակել ու շարունակում է բանաստեղծական ժողովածուների հրատարակությունները: Այդ հեղինակներից են Սարգիս Բեչյանը (Զանգու, 1917-2004) իր «Զարմանալի աշխարհ»-ով (2003թ.): 1940-ականների, հետպատերազմյան շրջանում պոլսահայ մի խումբ երիտասարդ մտավորականներ, ինչպիսին՝ Ա.Շավարշը, Հայկազուն Գալուստյանը, Ավետիս Ալեքսանյանը, Զավեն Պիպեռյանը, Ռուբեն Մաշոյանը, Խաչիկ Ամիրյանը և ուրիշներ պոլսահայ գրական նոր շարժման հիմքերում էին, հրատարակելով նաև մի շարք նոր պարբերաթերթեր: Այս շարժումը կասեցվեց քաղաքական դժվարին ժամանակների պատճառով: Այս կարևոր շրջանը կարծես թե սկսեց աղոտանալ մեր ժամանակներում: Ահա ֆրանսահայ (մախկին պոլսահայ) հայտնի բա-

նաստեղծ, խմբագիր, հրապարակագիր Ս.Ք. Չանգուի այս գիրքն իր արձակ էջերով, նամակներով լույս է սփռում արևմտահայ նոր գրականության համեմատաբար աղոտ այս էջերի վրա, քանակզին մասունքներ փրկում մոռացության մատնվելու ճանապարհին:

Հայտնի սրտաբան Կարո Կարապետյանը (Անել, 1922-2001) «Ի լրումն ժամանակի» բանաստեղծական սովոր հատորով(2002թ.) գալիս է լրացնելու չափածո իր 5 հատորների, հոգեբանական երկու վեպերի ու պատմվածքների շարքը: Նա 1988 թվականից Հայաստանի գրողների միության անդամ է և իր գրական գործունեությամբ նույնքան հայտնի է, որքան բժիշկ:

«Եթե կը սիրեք բանաստեղծությունը, պետք չէ անծանոթ մնաք Ներսես Վանականի բանաստեղծություններում, ուր պիտի գտնեք թե ազգային, թե համամարդկային և թե կրոնական լարերը կողք կողքի: Ներսես սրբազան եկեղեցաշեն գործունեության կողքին իր գրականությամբ ալ կը ծառայե հայ մշակույթի հարստացման», գրում է «ԱՐԱՍ»-ը Ներսես Արք. Պողոպայանի (Ներսես Վանական, 1937) «Յոյսի անտես թելերով» ժողովածուի տպագրության առթիվ, ուր մեկտեղվել են հայ հոգևոր հայտնի գործչի ազգային ու հոգևոր զգացումների արտահայտությունները:

«Անանուն երազ» գրքույկը(2000թ.) երիտասարդ բանաստեղծուհի Վերճիհան Ձիֆլիօղլուի(1975) անդրանիկ ժողովածուն է, որ 50 բանաստեղծություններ է ամփոփում: Ապացույց, որ պոլսահայ գրական կյանքը նոր ծիլեր է տալիս:

Ի պատիվ «Արաս»-ի, չեն մոռացվում նաև մանուկները: Դրանք են «Ոգնիկ» (2005թ.), «Պարտեզ»(2003թ.) գրքույկները, բուլղարահայ մանկավարժ Անահիտ Օշական-Ոսկերչյանի «Ոսկի պտուկը» (1999թ.) և «Հպարտ չղջիկը» (2002թ.) գրքույկները, հայաստանաբնակ գրող Սերգեյ Վարդանյանի մանկական պատմվածքներն ամփափող «Արեւածաղիկը» ժողովածուն, որն արևմտահայերենի է վերածել Մաքրուհի Հակոբյանը: Հրատարակիչները կազմում և տպագրում են գրելավարժության ձեռնարկներ, իսկ ամենամիտքրիկների համար՝ ներկելու արվեստներ այբուրենի ծանոթությամբ:

Հիմնականում այսպիսին է «Արաս» երկլեզվյա հրատարակչատան տրամաջան, հայրենասիրությամբ առլեցուն աշխատանքի արգասիքը: Բոլորովին էլ ամամպ ու խաղաղ, ընդգծված շահույթաբեր չի այն մթնոլորտը, ուր գործում են նրանք: Բազմաթիվ քարզմանիչների ներգրավում, կարևոր գործերի հրատարակում, նոր գրողների ներկայացում, հարգանքի տուրք-հրատարակություններ անցյալի գրողների հիշատակի ու նրանց գործերի նկատմամբ, կարևոր համագործակցության օրինակներ Ստամբուլի թուրք և մյուս մտավորական, հեղինակների, հրատարակիչների հետ:

«Արաս»-ն արդեն արժանացել է «պատուհան դեպի հայ գրականություն» հորջորջմանը, որը լավագույն գնահատական է նրա առաքելության, բարի հիշատակ հիմնադիրների՝ գրող Սկրտիչ Մարկոսյանի ու նրա աշակերտների: Ամենայն բարիք ու նոր հաջողություններ հրատարակչության տնօրինությանը, տնօրինուհի Փայլիմե Թովմասյանին, նրա յուրաքանչյուր մեղավաջան աշխատակցին և իհարկե՝ բուն «ԱՐԱՍ» հրատարակչատանը:

HASMIK STEPANYAN

“ARAS” BILINGUAL PUBLISHING HOUSE IN ISTANBUL (2000-2006)

“ARAS” bilingual publishing house was founded in 1993 in Istanbul. Since then about 70 books have been translated, edited and published in Armenian and Turkish. The purpose of the publishing house was to establish a bridge between various cultures of the region, present and hand down our cultural values to the present and next generations, continue the traditions of West-Armenian publishing culture, the deep roots of which spring yet in the Ottoman Empire, thriving to become in the new millennium the representative of this richest heritage in republican Istanbul.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1966թ. Երևանում մշվեց Հ.Մեծուրու ծննդյան 80 ամյակը: Այդ առթիվ 1968թ. Երևանում լույս տեսան նրա երկերը՝ «Կապույտ լույս» խորագրով:
2. Հ.Մեծուրու «Աթինա, աղ ում» («Atina, Tuzun Var Mi?») և «Քիթվաների դռները փակվեցին» («Kapandı Kirve Kapıları»), “Armıdan Fırat’ın Öte Yanı” գրքերը լույս են տեսել թուրքերեն՝ Սիլվա Կույումճյանի և Նուրհան Զյուրքճյանի թարգմանությամբ:
3. Թուրքերեն գրքերից «Գալվուրների թաղը» (“Gâvur Mahallesi”) (Դիարբեքլիի այս թաղում է ծնվել Սկրտիչ Մարկոսյանը), «Ասա Մարկոս, ո՞րտեղացի ես» (“Söyle Margos Nerelisin?”), “Biletimiz İstanbul’a Kcsildi” («Տոմսը մինչև Ստամբուլ է») գրքերը հիմնականում կենսագրական բնույթի են, ազգագրական հիմնադր նյութով առեցում:
4. “Güvercinin Harput’ta Kaldı” «Գիրքը թուրքերեն է թարգմանել Սարգիս Սերոբյանը:
5. Երկուսն էլ գրված են թուրքերեն:
6. Գիրքը թարգմանել է Սիրվարդ Մալխասյանը:
7. Գիրքը թարգմանել է Կլեման Զեյուկը(Ջաքարյան):
8. Գիրքը թարգմանել է Անի Պարոնյանը:
9. Գիրքը թարգմանել է Հերմոն Արսաթը:
10. «Վախկոտները համարձակ են» անգլերենից թուրքերեն թարգմանել է Հովհաննես Զըլլեդհաղըն: «70000սյուրյանը» թարգմանել են Հովհաննես Զըլլեդհաղըն և Ազիզ Գյոզդեմիրը: «Փարիզ-Ֆրեզնո...» թարգմանել է Բերիլ Էյուպօղլուն: ամփոփող «Իմ սիրտը լեռներում է» և «Ապրիլու ժամանակը» երկու թատերգությունները թարգմանել է Էջա Էրօղլուն: «Մարդկային կատակերգությունը» թարգմանել է Բերիլ Էյուպօղլուն:
11. Թարգմանել է Կլեման Զեյուկը (Ջաքարյան):
12. Հայերենից թարգմանել է Նաժդա Դեմիրճիօղլուն:
13. «Հայրս Աշրաֆ չգնաց»-ը թուրքերենի է թարգմանել Սիրվարդ Մալխասյանը:

14. ֆրանսերենից թարգմանել է Մայրա Մարիսը:
15. Հայերենից թուրքերենի է թարգմանել Միրվադդ Մալխասյանը:
16. Անգլերենից թարգմանել է Ալթուք Յըլմազը:
17. Անգլերենից թարգմանել է Ալթուք Յըլմազը:
18. Հայերենից թարգմանել է Ջավեն Պիպերյանը:
19. Այս մասին մանրամասն տես մեր հոդվածը «Պատմա-բանասիրական հսուղես»-ի 2005թ հ.2-ում, էջ 316:
20. Ֆրանսերենից թարգմանել է Արուսյակ Օգֆուրումեճուն:
21. Լույս է տեսել 2005թ.: Ռուսերենից ֆրանսերեն թարգմանել էԼյուդմիլա Դենիսենկոն, ֆրանսերենից թուրքերեն՝ Մուրլուջան Շահանը:
22. Լույս է տեսել 2003թ.: Հայերենից թարգմանությունը կատարել է Սարգիս Սերոբյանը:
23. Լույս է տեսել 2005թ.:Ֆրանսերենից թարգմանել է Էմրե Արալ Ալթունբաշը: